Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ

1. Ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման համար ջրօգտագործողը ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ դիմում է ներկայացնում լիազոր մարմին՝ կցելով ջրօգտագործման թույլտվության բնօրինակը:

2. Ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման համար.

1) ջրավազանային տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվում է մոնիթորինգ, ինչի հիման վրա կազմվում է զեկուցագիր՝ համաձայն Ձև N 2-ի.

2) ջրային պետական կադաստրի տարածական բաղադրիչի միջոցով ճշգրտվում է ջրառի և ջրահեռացման աշխարհագրական տեղադիրքը:

3. Ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման ժամանակ լիազոր մարմինը սույն կարգի ցանկում ներառված պահանջվող փաստաթղթերի համալրման նպատակով ծանուցում է ջրօգտագործողին անհրաժեշտ փաստաթղթերը 15 աշխատանքային օրվա ընթացքում համալրելու մասին: Սահմանված ժամկետում պահանջված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում լիազոր մարմինը մերժում է ջրօգտագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու դիմումը:

4. Ջրօգտագործման թույլտվությունը երկարաձգվում է նույն ժամկետով, նույն պայմաններով և պահանջներով, եթե ջրօգտագործման թույլտվության պայմանները և պահանջները չեն խախտվել կամ փոփոխվել, և առկա է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, կամ դրա ժամկետի երկարաձգումը չի հակասում օրենսգրքին, ջրի

ազգային քաղաքականությանը, ջրի ազգային ծրագրին, ջրավազանային կառավարման պլաններին, դրանց առնչվող նորմատիվ իրավական այլ ակտերին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ծրագրերին:

5. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման մասին որոշումն ընդունելուց հետո լիազոր մարմինն այդ մասին պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին և հրավիրում իր կողմից վավերացնել երկարաձգման ենթակա ջրօգտագործման թույլտվությունը:

6. Լիազոր մարմնի կողմից երկարաձգման ենթակա ջրօգտագործման թույլտվությունը վավերացնելուց հետո պատշաճ ծանուցվում է ջրօգտագործողին՝ ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարելու պետական տուրքը սահմանված կարգով ու չափով:

7. Լիազոր մարմինը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ սահմանված ժամկետում վճարված լինելու մասին և հրավիրում ջրօգտագործողին երկարաձգված ջրօգտագործման թույլտվության իր օրինակն ստանալու համար:

8. Լիազոր մարմինը դիմումի մուտքագրման օրվանից 3 ամսվա ընթացքում ուսումնասիրում է ջրօգտագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու դիմումը և սույն կարգի 4-րդ կետով նախատեսված պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում մերժում է ջրօգտագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու դիմումը:

9. Լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով լիազոր մարմինը գրավոր հրավիրում է հայտատուին՝ մերժման հիմքերը ներկայացնելու համար: Հայտատուի լսված լինելու իրավունքի իրացումն արձանագրվում է:

10. Ջրօգտագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու դիմումը մերժվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, ինչի մեջ հստակ նշվում են մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: Ջրօգտագործման թույլտվության մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Ջրօգտագործման թույլտվության ժամկետի ավարտից հետո ներկայացված դիմումի, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվության պայմանների և պահանջների փոփոխության դեպքում լիազոր մարմինը պատշաճ ձևով գրավոր ծանուցում է ջրօգտագործողին՝ ջրօգտագործման թույլտվության ստացման նոր հայտ ներկայացնելու վերաբերյալ:

12. Եթե ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը ներկայացվել է ջրօգտագործման թույլտվության կասեցման ժամանակահատվածում, ապա ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման հարցը քննվում է միայն կասեցումը վերացվելուց հետո: Կասեցման հիմքերը ջրօգտագործողի կողմից չվերացնելու դեպքում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չի երկարաձգվում և ջրօգտագործման թույլտվությունը ճանաչվում է ուժը կորցրած:

13. Եթե ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման պահին առկա են օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվության վերանայման հիմքերը, ապա ջրօգտագործողին տրամադրվում է երկարաձգված/վերանայված ջրօգտագործման թույլտվություն:

14. Երկարաձգված ջրօգտագործման թույլտվությունը կազմվում է 2 օրինակից, որից 1 օրինակը տրվում է ջրօգտագործողին, իսկ մյուս օրինակը պահվում է լիազոր մարմնում:

15. Երկարաձգված ջրօգտագործման թույլտվությունն ունենում է ծածկագիր՝ որտեղ նշվում է ջրավազանային կառավարման տարածքը, գետավազանը/գետը, ջրառը, ջրահեռացումը, ջրային ռեսուրսը և տրվող ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը՝ համաձայն Ձև N 3-ի:

16. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմինը երկարաձգված ջրօգտագործման թույլտվությունը և դրան կից պայմանները գրանցում է պետական ջրային կադաստրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ